

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Լոռու Մարզպետին կից երիտասարդական խորհրդի նիստի

01.07.2014

ք.Վանաձոր

Մասնակցում էին Լոռու մարզպետ՝Ա.Նալբանդյանը,մարզի տասներեք համայնքներից ընտրված երիտասարդական խորհրդի ներկայացուցիչներ և ՁԼՄ-ների աշխատակիցներ

#### Օրակարգում՝

- 1.Նիստի մեկնարկ:Բացման խոսք՝մարզպետ Ա.Նալբանդյան
- 2.Օրակարգի հաստատում
- 3.Մասնակիցների ներկայացում ըստ համայնքների
- 4.խորհրդի քարտուղարի ընտրություն(ոչ պոտական հատվածի ներկայացուցիչ,բաց քվեարկությամբ)
- 5.Քննարկումներ խորհրդի հետագա աշխատանքների,աշխատանքային խմբերի ձևավորման(աշխատանքային խմբերը ձևավորվում են բոլոր համայնքներում)վերաբերյալ:Առաջարկների ներկայացում:

Լոռու մարզպետին կից երիտասարդական խորհրդի առաջին նիստին ներկա էին բոլոր քսանվեց անդամները:

Նիստի ընթացքում Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանը հանդես եկավ բացման խոսքով,շնորհավորեց խորհրդի կազմի անդամներն :Հաստատվեց նիստի համար սահմանվաց օրակարգ:

Նիստի օրակարգի համաձայն անցկացվեց խորհրդի քարտուղարի ընտրություն ,որն անցավ բաց քվեարկությամբ:խորհրդի անդամների կողմից ներկայացված էին երկու թեկնածու՝ք.Վանաձորի ոչ պետական հատվածը ներկայացնող Քրիստինե Հովսեփյանը և ք. Ստեփանավանի ոչ պետական հատվածը ներկայացնող Նազելի Ավագյանը:Բաց

քվեարկության արդյունքում , ձայների մեծամասնությամբ(ձայների 10-16 հարաբերակցությամբ )Լոռու մարզպետին կից երիտասարդական խորհրդի քարտուղար ընտրվեց ք.Ստեփանավանի ոչ պետական հատվածի ներկայացուցիչ՝Նազելի Ավագյանը:

Առաջարկվեց՝

Ստեղծել աշխատանքային խմբեր ըստ տարածքների՝ համայնքային խնդիրների վեր հանման և լուծման ճանապարհների քննարկման համար:

Հանձնարարվեց՝

Հաջորդ նիստին ներկայացնել երիտասարդների կողմից համայնքներում բարձրացված խնդիրները:

Արձանագրեց՝ Նազելի Ավագյանը (+37495405081)

Մարզպետ՝ Արթուր Նալբանդյան

